

U. S. U. S. U. S.

2 4 6 8 10

ԳՈՒԼԿԱՐԻՄ

Starkluft 12 Br.

Ukqufukun, 6 Dr.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու թիւը մէկ ծրարու

Surtakus 14 Br.

Allegorizatum 7 Br.

ԱՄԵՐԻԿԱ

Surtihuli 2. 60 *Soy.*

Aequisetum 1.50 Sor.

41. 乙卯年

ԾԱՆՈՒՅՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ, ԶՈՐԵՔԵԱՔԹԻ ԵՒ ՀԱՔԱԹ

Գրոշիւնք եւ չեմ
տրոշիր

Տ 0 Գ Թ. Ն. Ս 0 Թ Ի Դ 0 Ֆ

Վերադարձ-Մանկաբարձ

Վառնա Մ. Լուիզա փողոց թիւ 8
(Զինւորական քիւպին մօտ)

Այս անգամ Բարիկէն վերադարձած ըլլալով, հիւանդ կընդունի ամեն օր ժամը 2—4:

ՄԱՍԼՈՅ ՆՈՐ ՕՐԷՆՔԸ

Նախարարապետ Բեթքըլի
աղբերգական մահէն յետոյ պուլ-
կար նախարարութեան գլուխը
կոչուելով Սպարանիէի նախագահ
Մ. Կուտէշվ գահիժը վերա-
կալմուեցաւ ըստ առաջնոյն մի-
ենոյն կուսակցութեան պետե-
րէն:

Նոր նախարարապետը փութաց
Սոպրանիէի բեմէն յայտարարել
թէ կառավարութիւնը քայլ ու
քայլ պիտի հետեւի թէ՛ ներք-
նապէս և թէ՛ արտաքինապէս
նախկին դահլիճի քաղաքակա-
նութեանը, Լսել է այն քստմնե-
լի ոճիբը՝ որ գործուեցաւ Բէթ-
քովի նման հայրենասէրի մը վը-
րայ, քաղաքական ոչ մէկ բարե-
փոխութիւն չը կրցաւ բերել ար-
դէն ժողովուրդական առածը կը
սէ, Գիշութենէն ազէկութիւն չի
ծնիր, Իսկ այս անգամ մասնա-
ւորի մը գիշութենէն ընդհանու-
րին գիշութիւն ծնելու հաւա-
նականութիւնը կը չեշտուի, Բէթ-
քովի սպանութեամբ կառավա-
րութեան բռնած քիչ մը խիստ
քաղաքականութիւնը չը մեղմա-
նալէ զտտ այսօր աւելի կը խըս-
տանայ

Դատական նախարար Մ. Բա-
նայոզովի կողմէ Սօսորանիէին
ներկայացուած մամուլի նոր օրէն-
քը կապացուցանէ թէ արդի կա-
ռավարութիւնը որոշած է խօսքի
և գրչի ազատութիւնը կապտել
ցարդ Պուկկարիոյ մէջ նմանը չը
տեսնուած սեղմումներով:

Իրաւ է թէ նախարարութիւնը
ինքզինք ապահովել կը կարծէ
մամլոյ երբեմն ներկայացուցիչ-
ներու յախուռն ընթացքը նոր
օրէնքով չյթալաւորելու միջո-

յաւ, Բայց այդ նախարարութիւնը
պէտք չէ մոռնայ թէ այս միջո-
ջոցը բռնակալական է. մամլոյ
ազատութիւնը բռնաբարել կիր-
քերը աւելի գրգռելու կը ծա-
ռայէ. մինչդեռ մամուլը երբ ա-
զատ ձգուի ու քաղաքական կամ
վարչական ամեն երևոյթ հրա-
պակաւ փաստաբանուի, ժողու-
դին դիւրութիւն տրուած կ'ըլ-
լայ՝ օրուան գործերուն ու խըն-
դիրներուն վրայ երկուստէք հը-
րատարակուած թեր ու դժմ
փաստերը լսելով՝ քննելու ու
խորհրդածելու, եթէ խօսքի և
գրչի ազատութիւնը բռնաբարե-
լու դրութենէն բարիք ծագէր,
Համիտական և Բլէվէական խըս-
տութիւնները թիւրքիան և Ռու-
սաստանը ողբալի վիճակի մը են-
թարկած չէին ըլլար, երբանդին
մամլոյ ազատութիւն վայելող
երկիրներ հսկայ յառաջագիմու-
թիւններ կրնէին:

Մամլոյ քննադատութենէն պէտք է վախճան միայն այն կառավարութիւնները կամ վարիչները որոնք իրենց գործառնութիւններուն մէջէն ճերմակ երես դուրս գալու վստահութիւնը չունին. իսկ որոնք սր վստահ են իրենց ուղղամտութեան, պէտք չէ վախճան քննադատութիւնէ կամ խօսքի ու գրչի կազմութիւնէն. Միայն չարագործները լոյսէ կը փախչին ու մթութեան մէջ գործել կուզեն: Մենք չենք կարծեր որ արդի կառավարութիւնը ինքզինք մթութեան մէջ պահելու պէտք ունեցած ըլլայ՝ ուստի կը ցաւինք ու կը զարմանանք այդ տեսակ օրէնք մը խմբագրուելուն: Այդ դէպի ետքայլ մըն է զոր կառնէ կաշատ Պուլկարիոյ արդի կառավարութիւնը:

U 2 7

Մանկապարտեզի պէս մի երախայոց դասարան կը պատրաստենք, ամսական գինը 3—4 լէվ, Գաղթական ծնողք թող չուտով գիտեն: Ա. Ամիրխանեանց

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԷՆ

ՀԱՆՍԱԹ ՍՈՒՐ

Գահիրեի Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան կողմէ վան զրկուած 100 լիբանոն ստացման առթիւ վանայ Առաքնորդարանէն հասած գրութենէն կը բաղկանայ հետեւեակ սրտաճըլիկ տոգրերը:

Այս չաբթու կսկիւնք բաշխել
դոյն գումարը և բաշխման եղա-
նակը ու ցուցակները Ձեզ կը
հաղորդեմք, արժէն վստահցնելով
Ձեզ որ բաշխումը ամենայն ա-
նաչառութեամբ կը կատարուի և
ճշմարիտ կաթտեալք միայն պի-
տի օգտուին :

Կը սիրեմք յուսալ թէ այս գումարը միակ ու վերջինն չպիտի լինի, Վասպուրականի ներկայ սովը, շատ աւելի մեծ ու ահւելի է քան որչափ գրիչը կրնայ նկարագրել, և աւելի օսատիկ ըլլալը կը գուշակուի յառաջիկայ ամիսներու մէջ: Գիւղերէն ու գաւառներէն խումբ խումբ սովեալք, ցնցոտիներով հազիւ ծածկուած, բոպիկ, անօթութենէ կմախքի գոյն ստացած ամեն օր տեղս սը դիմեն ի խընդիր հացի և զմեզ պաշարած Առաջնորդարանին մէջ հաց կը խնդրեն: Հարիւրաւոր կանայք ամիսներով զօրանոցներու ալիւրի թեփով կը կերակրուին միայն, զոր հազիւ կրնան ձեռք բերել, ժամերով զօրանոցներու դռներու տուօջ կեցած: շատ մը գիւղերու մէջ պարտաւորուած են ուտել անբնական և անմարս նիւթեր, ինչպէս խաղողի կուտէ չինուած հաց, խոտի տեսակ մը սերմ, կտաւատի դիրտ (կուսպ) ևայլն: Այս սովը աւելի սաստիկ է, քան 1879—80ի մեծ սովը, որչափ որ արմտեաց գները նոյն ժամանակի գներուն հասած չեն, բայց այժմ աղքատութիւնը ու թշուառութիւնը աւելի սոսկալի են:

Երկու ամիսէն գարուն կուգայ,
սերմնացանի ժամանակը, բայց
գեղացին որ աւօրեայ ուտելու
հաց չունի, սերմնացու ի՞նչպէս
և ո՞ւսկից պիտի ունենայ հետեւ-

Աբարար չը ցանեւոյ չը հնձեւոյ,
սովը աղքատութիւնը ու թշուա-
ռութիւնը մնայուն հանգամանք
մը պիտի ունենան, ուստի յատ-
կապէս կը խնդրենք ուշադրու-
թեան առնուլ այս խիստ կարե-
ւոր պարագան և նպաստի կա-
րեւոր բաժին մը եւս սահմանել
թէ հացագինի և թէ մանաւանդ
գարնան սերմնացուի համար:

Այս արամսորմօք աեղեկութեան վրայ Զ. Բ. Ընդհ. Միութիւնը Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի նախագահութեամբ անյիջապէս նիստ ժը բնելով որոշած է 230 եգրպտ. ոսկի եւս ղըրուել :

Ր Ո Ւ Մ Ի Ա

Ս. Բէդերսպուրկ, 16 մարտ

Տուժան այս առաւօտ ժամը 11ին
գումարուեցաւ Աշնուականներու ժո-
ղովարանի արտին մէջ: Նախարարա-
պետը կարգաց կառավարութեան յայ-
տագիրը Տուժայի խորհրդակցութեան
ենթակուելիք օրինագիծերու մասին:
Այս բոլոր օրրնագիծերը, ըսաւ նա-
խարարպետը, հիմնուած Նայրանիքը սահ-
մանադրկան պետութեան մը վերածելու
ընդհանուր գազափարին վրայ:

Նախարարապետը յետոյ բացատրեց թէ այս ծրագիրները կը ձգտին ընկերութեան բոլոր դասակարգերուն վիճակը բարելաւելու. եւ ծանրացաւ երկու րոպէս ժողովրդին համար բարենորոգութեան մը պէտքէն վրայ, որպէս զի վերջ մը տրուի անոր արդի վիճակին յորում կը տառապի ազգին մեծագոյն մասը։ Այս նպատակաւ ծրագրուած է այն օրէնքը որ գիւղացիները սեփականատէր կընէ՝ Պետութեան կառուածներուն վրայ։

Միւս օրինագիծերը պիտի ձգտին իրականացնել 1905 հոկտեմբեր 10-ի հրովտրտակին սկզբունքները, իղճի եւ յարաբերութեանց ազատութեան, անձի ու բնակարանի անձեռնմխելութեան խնդիրները զեռ չեն կարգադրուած ուս-սական օրէնսդրութեան կողմէ։ Ամէն օրինական բարեփոխութիւններ որ զա-զափարներու այս ուղղութեան մէջ պիտի դրուին, հիմնուած պիտի ըլլան քրիստոնեայ պետութեան սկզբունքներէ վրայ, ուր Օրթոտօքս կրօնքը պետե-առանձնաշնորհեալ ըլլայ։ Սակայն Օր-թօտօքս եկեղեցւոյ իրաւունքներէ խնդրը պէտք է զպիշ ուրիշ կրօնք-ներու իրաւունքներուն եւ կառավա-րութիւնը այս մասին ծրագիրներու չարք մը պիտի ներկայացնէ։

ՄԻԱՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՍՈՅ
1906 ՄԱՐՏ 6-ԷՆ ՄԱՐԶ 1907 ՄԱՐՏ 6

ՄԱՌՏՔ

ՅՐ. ՄՆԴ.

ԵԼՔ

ՅՐ. ՄՆԴ.

Նախորդ տարեցի: մնացած պատրաստ գրամ	77	56	Եկեղ. ներկման, վերնատան եւն. շինութեանց	1135	—
Եկեղ. ներկման եւն. պնակէ եւ հանգանակութենէ	415	80	Խորհրդարանի ծախս	212	95
Տապանաքար դնելու հրամանագրերն	315	—	Տկ. Փաստ. լեռնահանէ գնւած անդրկարի միացորդը	40	—
Կայունածններէ	1302	40	Կայունած. եւ թաղապ. տուրք եւ նորոգութեանց	350	41
Ամուսնական վկայագրերն	17	10	Հոգաբարձութեան	2883	—
Նուիրատուութիւններէ	17	50	Վճարուած ապահովագրողչէք	80	—
Իւզագրներէ	953	75	Եկեղեցւոյ ծախս	175	75
Մազկեպսակներէ	35	—	Գնուած այլ եւ այլ կարասիք	119	30
Վաւերացուցման	67	30	Տրուած նպաստ	10	80
Թաղման տուրքէ	644	44	Տաճար վի 2 անգամ ժամուց եւ այլ ծախս	156	11
Պատկերամի հասոյթներէ	713	20	Ոսկիի տարբերութենէ եւ օտար դրամներէ փնաս	3	25
Բանկայէն	3526	40	Գնուած մոմերու, ձիթարի եւ մոմաթափին	629	25
Յատուկ պատարագներէ	163	89	Քարտու դարի, ձայնաւորի, լուսարարի, ժամակոչի	2863	40
Մկրտութեան վկայագրերն	89	50	Արծթ. խաչ, ձայնաւոր տղայոց, քննչ. հմր. շապիկ	90	20
Յայաւի օրհնութիւններէ	242	10	Քլէմանթին իշխ. հոգեհանգ. եւ քաղաքիկ ծախուց	48	35
Աւագանի տուրքէ	318	—	Միտու կը պատրաստ գրամ	36	18
			Պահանջք Տ Արեւոդոմ քնն. Թորոսեանէ	65	—
	8898	94		8898	94

Վասն ճշգրտութեան հաշույս կատարադրենք

Ի դիմաց Թաղկ. Խորհրդոյ

Ատենադպիր
Ն. Գ. ՔԵՍԱՆՆԵԱՆ

Ատենապետ
Խ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ

Վառնա, 12 Մարտ 1907

Եկեղեցւոյ եւ խորհրդարանի ծախսն է, հանգանակութեան, անուխ, խուսկ, եկեղեցական անօթներու, ներդրում, մարդանամարի տետրակ, թուղթ, սեփարակ, հեռագրեր, նամակածախս, քարի. դ. ընկալագրոց տպագրողչէք եւ այլն:

Ներկայ հաշուեկշիռի մասին դիտողութիւն ունեցող Պատ. ազգայինք՝ ըստ Ազգ. Մահմանագրութեան՝ պարտին թուականէս մինչեւ 21 օր Թաղ. Խորհրդարանի գրմանով պէտք եղած բացատրութիւնն առնելու: Մոյն պայմանաւորմէն ետքը ըլլալիք ո եւ է դիտողութիւն անխելի կը մնայ:

Անձի անդունդարեւելութեան նկատմամբ օրէնքը հիմնուած պիտի ըլլայ այն ընդհանուր սկզբունքներուն վերայ որոնք կան բոլոր սահմանադրական երկրներու մէջ: Բացառիկ օրէնքները պիտի ջնջուին կամ կրճատուին: Կառավարութիւնը նպատակ ունի ներկայացնելու Ձէմսովոններու եւ քաղաքապետութեանց ինքնավարութիւնը յարգելու համար մասնաւոր օրէնքներ: Նախարարապետը յետոյ թրուեց այն բարենորոգումները որոնք արդարադատութեան եւ հողագործութեան կը վերաբերին: Գործաւորներու խնդրոյն նկատմամբ ալ, կառավարութիւնը կը ճանչնայ թէ անհրաժեշտապէս պէտք է որ Պետութիւնը հող տանին անոնց կազմակերպութեան եւ վիճակի բարելոման մասին: Նկատելով թէ գործաւորներու շարժումը նպատակ ունի իրենց վիճակին բարելոմելու, կառավարութիւնը պիտի ջանայ

սչ մէկ կերպով զայն ոտնակոխ չընելու: Կառավարութիւնը պարտաւոր պիտի ըլլայ նաեւ պաշտպանել ընկերութեանն այն շահերը՝ որոնք պէտք չէ որ ծայրահեղութեանց ենթարկուին: Պիտի ապահովէ շահակցողներու, յանձնառուներու եւ գործաւորներու գործիչ կատարելալ ազատութիւնը նոյնպէս ալ տնտեսական գործառնութեան ազատութիւնը: Կառավարութիւնը կը ծրագրէ ծեր կամ հիւանդ գործաւորներու ապահովութիւնը եւ անկարողներու քարմանումը գիշերային եւ հանքերու մէջ աշխատութեան պաշտպանութիւնը, գործաւորաց կիներուն ու տղաներուն պահպանութիւնը, նոյնպէս ալ բոլոր գործաւորներուն համար աշխատութեան ժամերուն նուազումը: Նախարարապետը յետոյ անցաւ միւս նախարարութիւններու ծրագրուած միջոցներուն եւ յիշեց երկաթուղիներու շինութեանց օրէնքը եւ հանրային կրթ-

թութեան բարենորոգումը: Խնդրեց Տուժայէն անյապաղ քննել պիտե՞նի ծրագրերը, իբր ստիպողական անոր գործադրութեան դրուելու: Նախարարը ծանուցաւ բանակի եւ նաւատորմի ինչ համար նոր ծախսերու պէտքերն վրայ իր հետեւանք պատրաստելու եւ հա. կառակ խաղաղութիւնը պահպանելու համար ընդհանուր բաղձանքին: Նա չնչտեց նոր տուրքեր աւելցնելու պէտքը, մանաւանդ կալուածական հասոյթներու վրայ, եւ վերջացոց ըսելով թէ մեծն Ռուսիոյ վերածնութիւնը եւ իր անդորրութիւնը կրնան իրականանալ միայն կառավարութեան ցոյց տուած սկզբունքներու գործադրութեամբ, եւ ան պատրաստ է իրականացնելու. կառավարութիւնը մեծ ջանքեր պիտի թափէ եւ իր բոլոր բարի կամեցողութիւնը Տուժային արամադրելի պիտի ընէ, որ յանձին անոր պիտի գտնէ աշխատակից մը որ կը խոստովանի իր պարտականութիւնը պահպանելու Ռու-

սիոյ պատմական աւանդութիւնը եւ խաղաղութեամբ ապրելու, այսինքն կառավարել հաստատաւորութեամբ եւ կորովով:

Նախարարապետին այս յայտարարութիւնները ընդունուեցան աջակողմ ծախահարութիւններով: Յետոյ Ընկերվար-Ռամկավարական երեսփոխան Ջէ. րէթէլին բուռն ճառ մը արտասանեց կառավարութեան դէմ եւ առաջ բերաւ ողակողմէն խիստ բողոքներ: Ատենախօսը կարգաց Ընկերվար-Ռամկավարական կուսակցութեան յայտարարութիւնը, յայտնելով որ կուսակցութիւնը պիտի շարունակէ ժողովուրդին աչքերը բանալ, որպէս զի անոր ցուցնէ կառավարութեան բուռն մտադրութիւնները եւ զայն պատրաստէ կամայական իշխանութեան դէմ վճռական կռիւն համար:

Վիճարանութիւնը գոցելու առաջարկութիւնը մերժուեցաւ:

Աջակողմեան շատ մը տեղեկանքներ կոչ ըրին Տուժային եւ հրաւիրեցին Սթոլիբինի զահիճին հետ աշխատել եւ հրաժարել յեղափոխական գաղափարներէ: Տպարհները երեսփոխանը առաջարկեց կառավարութեան վստահութիւն յայտնել, հաստատելով թէ Տուժան կը բաղձայ անոր հետ աշխատել եւ կը պարտաւէ հին Տուժան:

Տուժայի նախագահը յայտարարեց թէ չը կրնար ընդունիլ առաջարկութեան վերջին մասը: Աջակողմեան եւ ընկերվարական երեսփոխաններ շատ մը ճառեր խօսեցան եւ վերջին տնտեսաբանը, Էվրոկիուս եպիսկոպոսը, համերաշխութեան կոչ ըրաւ ու ըսաւ թէ աջակողմեան կուսակցութիւնը ազգին թշնամին չէ, բայց դէմ է ժողովրդի յեղափոխութեան: Ռուսիոյ վերածնութիւնը միայն խաղաղական միջոցներով կրնայ ձեռք բերուիլ:

Նախարարապետը կրկին խօսք առնելով, կոչ ըսաւ կեդրոնին եւ ձախակողմին ու ըսաւ հօկու ձայնով մը, թէ չը պիտի խօսի բնաւ ատելութեամբ զոր կը գործածեն իրեն նկատմամբ ձախակողմեան անդամները: Կառավարութիւնը հարկ կը համարի յայտարարել թէ Տուժան ընտրուած չէ զատաւորական պետան մը կազմելու համար որուն առջեւ նախարարական նստարանը ամբաստանաւորներու նստարան ըլլար: Այս նստարանը իշխանութեան ամբողջ է: Կառավարութիւնը տոյն ատեն գործի գլուխ անցաւ երբ երկրորդ բոլորովին բողոքող ու յեղափոխութեան մէջ էր: Գիտէր այն պատասխանատուութիւնը զոր կը ըստանձնէր եւ այն ամբաստանութիւնները որոնք իրեն դէմ պիտի կազմ-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

59

ԱՌԱՋԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՎՐԵԺԸ

(Շար. Նախորդ Թիւէն)

— Իրաւունք ունիք, տարաբաղդ խաթուն, ընդհատեց Աւագակապետը խանդավառալի եւ միանգամայն լեցուած ձայնով մը բայց ո՞վ է որ երջանիկ կապի այս երկրին մէջ: Դուք քաղաք տուէք Առտուծոյ... անդին մայալեր կան, որոնք աչքովին կը տեսնեն

իրենց մէկ հատիկ զաւկին կախաղանը բարձրանալը... մայրիկ կան, որոնք որոնք այս գաղաններու ձեռքը կը լլկուին... Ասիկա մեր գործի ժողովուրդին ճակատագիրն է... ասիկա խէնէջ կառավարութեան մը բէժիմն է. որուն գարշութեանց հանգէպ տարիներէ ի վեր գլուխ ձգած ենք ու կը հսկակերպինք: Չ'է յոյսերնիս չը կըտրենք... մեր աշխարհքը չը մնար արեան գետերու մէջ:

Ու մեծ մարդը ներողութիւն խնդրելով ոտքի ելաւ ու ըսաւ.

— Կը մեկնիմ ես. խաթուն, բայց կը խնդրեմ որ կատարեալ վստահութեամբ այսուհետեւ յայտնէք ինձի ինչ քանի որ պէտք ունենաք: Միեւնոյն ժամանակ հարկ է որ ծածուկ պահէք իմ հայ ըլլալս: Ահա տոյսչափ... միաք բարով...:

— Երթաք բարով... Թոթովեց կրնն

ու հետեւեցաւ Աւագակապեան որ ցանկապատէն անցնելով քայլաւորաւ շէնքերու փողոցին մէջ մտաւ. ու հեռացաւ:

Արեւը բարձրացած էր: Աշնան գաղջ... մեղանուշ օրերէն մին էր այդ օրը, ուր մարգուս հոգին ակամա կը լեցուէր ու բնութիւնն աւելի կանուշնայ իրեն համար:

Այսպէս, Աւանուց բարձր պատեւուն տակ, որոնք կը շրջապատեն այգիներն ու պարտէզները, Աւագակապետը պահ մը կանգ առաւ ու յոյնած վրձակով մը նստեցաւ անկիւն մը: Լայ ու կանոնաւոր պողպատայ մըն էր առջեւը տարածուողը, ուսկից կանցնէին իրարու ետեւէ գիւղացիներն, ոմանք իրենց նահապետական տարիներէ ի վեր մնացած սայլերով, ոմանք էջէլով եւ ոմանք ալ հետիոտ...:

— Խնձ արարածներ... միմեջեց Ա-

ւագակապետն ինքնիրեն, դուք անդուր, անդադար կախատիք: ձմեռը՝ սառեամանիքին հանգէպ ու ամառը՝ կիզիչ արեւուն տակ քրտինքնիդ կը թափէք... դուք այս հոյակապ ապարանքները, այս բարձր պարիսպները, այս ճոխ ու հրաշալիքներով լի քաղաքները կը կանգնէք... բայց ինչ է ձեր վարձատրութիւնն, ինչ է ձեր վստակը... ոչինչ, ոչինչ... զըրկանքներով, անիրաւութիւններով ու տառապանքներով դառնացած լինանքէ մը զատ՝ բան մը չ'ունիք: Տարէ՛ք ամբարեցէք ճորտերու ապարանքէն ներս ձեր արիւն արցունքը... տարէ՛ք, մի կենաք, որովհետեւ խաղաղանք կայ, որովհետեւ երկաթաւոր կայ: Ո՛հ, քնած էք ու կապրիք միմիայն ծառայելու համար... մինչեւ որ ձեր ճակտի քրտինքը գաղբի ու դուք ձեր երակներու արիւնը տաք...:

ուէին, սակայն ինք պատրաստ է մի
եւնոյն ատեն աշխատելու երկրին ան
զորութեանը հայրապետ Կառավարու-
թիւնը գիտէ թէ երբեմն իշխանութիւնը
միտած են զեղծունեւոր գործելու եւ
ինք շատ երախտապարտ պիտի ըլլայ
Տաւադիւն եթէ սա հաճի այդ զեղ-
ծունեւորը կառավարութեան մատնա-
ցող ընելու Կառավարութիւնը չի փախ-
չիր պատասխանատուութենէ, բայց ոչ
ալ կը սարսափի երբ իր վրայ ձեռք
բարձրացնեն
(Բուռն ծափահարութիւններ):

ՕՍՄԱՆ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

—*—

ՊԼՏԻՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ(“)

(Շար. նախորդ թիւին)

Յօդ. 65.— Պատգամաւորներու թիւը
կորուցէր հետեւեւայ կերպով. օսման-
եան հաստակ 50,000 արու անձ մէկ
պատգամաւոր կը նստէ:

Յօդ. 66.— Ընտրութիւնը կը կատար-
ուի գաղտնի քուէարկութեամբ: Ընտ-
րութեան եղանակը կորոշուի առանձին
օրէնքով:

Յօդ. 67.— Բայցի նախարարներէն՝
պետական պաշտօնեաները պատգամա-
ւոր չեն կրնար ըլլալ: Ուեէ պաշտօնա-
տար պատգամաւոր ընտրուելէ յետոյ,
ազատ է ընդունիլ կամ մերժել ըն-
դունելու պարագային պէտք է հրա-
ժարի իր պաշտօնէն:

Յօդ. 67.— Պատգամաւոր չեն կրնար
ընտրուիլ:

1. Օտարահայտակները:
2. Անանք՝ որ գոյութիւն ունեցող
մասնաւոր օրէնքի մը համաձայն, օտար
ծառայութեանը մէջ մտած ըլլալով
առանձին արտօնութիւններ կը վայն-
լեն:

3. Անոնք որ թուրքերէն չեն գի-
տեր:

4. Անոնք որ երեսուն տարին լրա-
ցուցած չեն:

5. Ուեէ մէկի մը մօտ ընտրութեան
ժամանակ ծառայ կողմերը:

6. Մանկացած ե իրենց վարկը չը
վերականգնած անձերը:
7. Այն անհատները, որ իրենց յոռի
ընկալքով արատաւորուած են հասա-
րակութեամբ աչքին առջեւ:

8. Դատաստանական արգելքի տակ
գտնուող անձինք, մինչեւ արգելքին
վերականգնուի:

9. Անոնք որ զրկուած են իրենց
քաղաքացիական իրաւունքներէն:

Աւաղակապետը չը շարունակեց իր
քառանկողնային մենախօսութիւնը: Մե-
քենարար ոտքի ելաւ ու յազաջացաւ
ղէպի քաղաքը տանող ճամբան:

Կէս օր եղած էր: Քաղաքին մեծ գու-
ռին առջեւ խոնուած էին թուրք ման-
րավաճառներն ու բարձր ու խաղտ
ձայնով մը կը պոսային:

— Հա կիթտի գալմատը, թագէ էլ-
մալար... :

Աւաղակապետը թուրք մանրավա-
ճառներէն նայցցաւ ու «ախ» մը հա-
նեց հոգիէն ժամանակ մը՝ հայեր էին
անոնց տեղ եւ չորս կողմէն հայ լեզ-
ուի արտասանութիւնը կը լսուէր: Եւ
դեռ իր մանկութեան քաղցր օրերու
քաղցր յիշատակներէն մնացած՝ կար-
ծես կը հնչէին ականջին սա բառերը:

— Թա՛մա խնձո՛ր, Արտասերու խնձ-
ո՛ր... մալաղի տա՛նձ... կերթա՛յ,
չը մնար:

10. Անոնք որ օտարահայտակու-
թեան խնդրանք տուած են:

Յօդ. 68 (Առաջին ընտրութիւններէն չորս
տարի յետոյ, պատգամաւորութեան
պայմաններէն մէկը պիտի ըլլայ թուր-
քերէն կաղալ՝ եւ որքան կարելի է
զրել գիտնալ):

Յօդ. 69.— Պատգամաւորական ընդ-
հանուր ընտրութիւնները կը կատար-
ուին չորս տարին անգամ մը: Իւրա-
քանչեւ պատգամաւորի պաշտօնը կը
տեւէ միայն չորս տարի. բայց վերըն-
տրելի է:

Յօդ. 70.— Ընդհանուր ընտրութիւն
ները պիտի սկսին նոյեմբեր 1էն գոնէ
չորս տարի առաջ, ժողովը պիտի բաց-
ուի նոյեմ. 1ին:

Յօդ. 71.— Իւրաքանչիւր պատգա-
մաւոր կը ներկայացնէ ոչ միայն զին-
քը ընտրող շրջանակը, այլ եւ ամբողջ
օսմանցիները:

Յօդ. 72.— Ընտրողները պարտաւոր
են իրենց պատգամաւորներն ընարել
իրենց գաւառէն:

Յօդ. 73.— Երբ ժողովը կայանբա-
կան իրաւէնով լուծուի, ընդհանուր
ընտրութիւնները պէտք է տեղի ունե-
նան աշխարհի ժամանակ մը որ առ
առաւելին վեց ամսէն վերադառնալու
ուրիշ ժողովով:

Յօդ. 74.— Պատգամաւոր մը իր ընտ-
րելի հանգամանքը կը կորսնցունէ
մահուան, դատաստանական արգելման
երկար բացակայութեան, դատաւար-
տութեան կամ պետական պաշտօնի մը
հրաւիրութեամբ պարագաներուն մէջ:

Յօդ. 75.— Պատգամաւորի մը տեղ
ընտրուող երեսփոխանի պաշտօնը կը
տեւէ մինչեւ յառաջիկայ ընդհանուր
ընտրութիւնները:

Յօդ. 76.— Պետական գանձարանէն
իւրաքանչիւր պատգամաւորի տարեկան
20,000 դր. առճիկ պիտի յատկանայ:
Պատգամաւորներու Կ. Պօլիս երկեւե-
կելու ճանարարհաճութեան կը վճարուի
նոյնպէս դանձարանէն եւ այն հաշուով
որ ճանապարհածախք-կը տրուի առ
հասարակ պետութեան ընտրելու պաշ-
տօնեաներուն. որոնք 5000 դր. չաւ-
սաթօյակ կը ստանան:

Յօդ. 77.— Պատգամաւորական ժո-
ղովին նախագահն ու երկու փոխ նա-
խագահը կը նստէ վեհ Սուլթանը ինը
հոգիէ բաղկացած թիկնաձուներէի ցան-
կի մը մէջէն, զոր ժողովը կորոշէ
քուէներու մեծամասնութեամբ: Այս
ինք ընտրելիներու մէջէն երեքը առա-
ջին նախագահութեան, երեքը՝ դեր
նախագահութեան եւ երեքն ալ երրորդ
նախագահութեան համար են: Նախա-
գահը ու փոխ նախագահը իրաւէնով

Ո՛ր էին անոնք... ո՛ր էին այդ
առողջ, այդ թովալիկ ու ճարպիկ
հայ մանրավաճառները:

Ու Աւաղակապետը խորին տրտմու-
թեամբ մը շուկայի կողմը գնաց: Հոն
հանդիպեցաւ թուրք աղայի մը, որ հա-
յու մը խանութէն ապրանք կը գնէր:
Սակարկութիւնը վերջացած էր: Հայը
խնդրեալով կառարկէր թէ՛ պուած ապ-
րանքին կանգունը դահեկանն ու կէս
հաշուած ու այնպէս կտրած եւ, հե-
տեւարար պէտք է որոշեալ գինը վը-
ճարուի, եթէ ոչ կանգունը գրեթէ 30
փարայի կողքայ: Մինչդեռ թուրք ա-
ղան ատանկ ատարկութիւններէ չէր
հասկնար ու ահա ինչ որ կը պատաս-
խանէր.

— Պէ՛ կեալուր, սէնիւն տէտիլին մը՝
օլաճաղ... ինչէ՛ պու գատար վէրի-
րիմ... իսթէր ալ, իսթէր այմա՛:

— Էյի, ամա՛ գիտն իտէրիմ, աղամ:

կանուանուին:

Յօդ. 78.— Պատգամաւորական ժո-
ղովին նիստերը հրապարակային են:
Սակայն ժողովը կարող է դաժակ
նիստ ընել, եթէ նախարարները, նա-
խագահը կամ տասնհինգ պատգամա-
ւորներ կառավարկեն եւ ժողովը ա-
ռաջարկը կընդունի:

Յօդ. 79.— Պատգամաւոր մը, բացի
այն պարագայէն երբ յանցանք գործած
տեղն իսկ կը բռնուի, չի կրնար ձեր-
բակալուիլ կամ գտնի ենթարկուիլ:
Մինչեւ որ ժողովը մեծամասնութեամբ
չորշէ,

Յօդ. 80.— Պատգամաւորական ժո-
ղովը քննութեան կենթարկէ որինազը-
ծները պետական երեւոյթի եւ Սահ-
մանագրութեան վերաբերեալ տրամադ-
րութիւնները, զորս կընդունի, կը բա-
րեփոխէ կամ կը մերժէ: Նախարարե-
րուն հետ համաձայնութեամբ կը քննէ
եւ կը քուէարկէ պետութեան ընդհա-
նուր ծախքերու գումարն ու գանձը
ձածկելու համար օրոշուած տուրքե-
րու շաքի եւ քաղցւ. ներանակը:

(Շարունակելի)

ՌՈՒՄԱՆԻՈՅ ԱՊՍՏՈՅԲՈՒԹԻՒՆ

ՌՈՒՄԱՆԻՔ 12 մարտ

Նախ Ռօլտովիան սկսող գիւ-
ղացիական շարժումը սպասելի
արագութեամբ բոլոր Ռումանիոյ
մէջ տարածուեցաւ: Պուգրէշէն եւ
ճրճովայէն հոս հասնող փախստա-
կանները սարսափելի իրողու-
թիւններ կը պատմեն:

Պուգրէշը յիսուն հազարէ ա-
ւելի գիւղացիներով պաշարուած
է գրիթէ շրջակայ ագարդիները
ու գործարանները կողոպուած,
այրուած ու քանդուած են: Գեղ-
ջուկ խաժամուժը քաղաքներն ալ
աւերել կը սպառնայ: Շատ տե-
ղերու հետ հազարդակցութիւնք
գաղթած են, հեռագրաթիւրներ
կտրուած են: Զորքը թնդանօթ-
ները լարած քաղաքին շուրջը
կը կռուի խուժող գիւղացիներուն
դէմ որոնք զինուած ալ են: Վեր-
ջապէս երկիրը մեծ վտանգի մէջ
է:

Հոսկի կը տեսնուի ճրճովա-

կը կրկնէր հայ խանութպանը՝ որուն
ձեռքն ու ոտքը կը գողային:

Այս վիճաքանութեան վրայ ոտա-
կան մը ստեղծաւ ու խոժոռ նայուած-
քով մը հրաժայեց:

— Այնպ տըր... սէն էսնաֆ պի-
րատմարն, սուս օլ... եօգսա՛:

— Պէ՛ ճանրմ, կեալուր քըս՛ը խը-
ճըր օլմասա՛ օլմազ մի՛, վրայ բերաւ:
Թուրք աղան ու ապրանքն առնելով
հեռացաւ:

Ան ատեն թշուառ խանութպանը
վիզը ծռեց ու մըմիլեց ինքնիրեն:

— Ի՛նչ ընեմ, տուած ապրանքս օ-
ճու չապակի դառնայ մարմնոյդ վրայ,
մարդ, ու կրակի պէս այրէ քեզ:

Աւաղակապետը հեռացաւ: Այս ան-
գամ մտաւ վաշխառուներու շուկան,
որ ամենէն գեղեցիկ մասն էր:

Այն տեղ ալ գեղացիներ կային, ա-
մենքն ալ հայ: Այս ողորմելիները չըր-
ջապատած էին բարձրահասակ, խորխո-

քաղաքին շուրջը գտնուող ջաղաց-
ներու եւ գործարաններու բոցերը,
կը լսուին թնդանօթի խուլ ձայ-
ներ: Դանուրի վրայ դիմաց եր-
թեւեկող փշերիկ շոգեճուր ա-
նըդհար փախստականներ կը
փոխադրէ հոս: Ասոնց մեծ մասը
վաճառականներ, ագարակատէ-
րեր, հրեաներ եւ պաշտօնեաներ
են: Եւ կը պատմեն թէ ճրճովա-
յի շուրջը 30 հազարի մօտ գիւ-
ղացիներ խմբուած են ու թնդա-
նօթագիք զօրաց դէմ կը կռուին
քաղաք խուժելու համար: Խու-
ժանին բազմութիւնը ահ կազդէ
թէ մէկ ժամէն միւսը քաղաքը
հրոյ ճարակ ըլլայ:

Քաղաքիս պանդոկները փա-
խստականներով լեցուած են ար-
դէն, մէկ կողմէ ալ կուգան:

ԾԱԽՈՒԹԻՐՔԵՐ

ԹԻՒՂՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.

» Բ. » [433 էջ] 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԿՈՐԱՆ կամ ՄՐՈՒՌԵԶ
ՀԱՅԱՍՏԱՆԵՐԿՐՈՐԴ անդամ տպագ-
րուած եւ ճոխացած. Դին 1 ֆր.

ՆԷՏԱ կը պատկերացնէ Պուլկար-
ներու նիստ ու կացը ու թուրքերէ
կրած տառապանքը անոնց ազատու-
թենէն առաջ: Դին 50 անգամ

ՀԱՅԵՐԵՆԻԿԻ ԶՈՒՆՐ Պատկեր
մը Տաճկահայաստանի իրական կեան-
քէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմե-
լ ԱՌՆԱ «Իրաւ ու յար» ի խմբագ-
րութեան

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Բնիկ Բաղէշի նահանգից կամ Ախ-
լատ քաղաքի խաղաղար թաղից գի-
նազործ Յովհաննէսի որդի Կարապետ՝
որ հաստատուած էր Սոխորդ գիւղ, 48
տարեկան, միջանասակ թխագէմ, սեւ
աչքերով, սեւ պիւրով Պոլսոյ դէպ-
քից յետոյ Պուլկարի անցած է: Ուր
որ է, ով որ կը ճանչնայ թող հաճի
երկու տողով իմացնել հետեւեալ հաս-
ցէին:

Ս. Մ. չեղ Զոթօկրաֆ
ու լեզա Զաքարովա իւր 24 երկր. թաղ
Վառնա

—*—

ղէմքով ու ծանրահայեաց վաշխառու-
ներն, որոնք խմբաւ կը կոչուէին: Ա-
սոնք ալ հայ էին, բայց միայն անու-
նով:

Վաշխառուին մէկը բարձրաձայն
կը պոսար:

— Ենթեր, զու՛մ ե՛րբ սպասեմ... էս
եղաւ տասն ամիս է որ փարսա կը
փճանայ: Աղէկ գիտէք որ փարսա՛ փա-
րա կը բերէ: Մենք մէկ ոսկրով հին-
գը, տասը չը վաստկինք, ինչի՞ հա-
մար նստեր ենք այս տեղ... թէ որ
խաթըր էր՝ ըրի, թէ որ սարգկութիւն
էր՝ ձեռքէս եկածքն չափ ետ չը կեցայ
... իսկ թէ ասեմ ազգութիւն էր՝ այն
ալ չը մոռայ: Ինչի՞ր չուկան, մուրիկ
մուրիկ ման եկուր, նայէ, կրնաս զը-
նել մէկը, որ տասն ամիս լուռ մնայ:
Ես կասեմ թէ ատանկ մարդ մը չեմ
տեսներ:

(Շարունակելի)

